

**ԵՐԿՐԱՑԻՋԻԿԱ**, Երկրի մասին գիտությունների համալիր. ուսումնասիրում է Երկրի և երկրաթաղանթների ֆիզիկական հատկություններն ու դաշտերը, ինչպես նաև դրանցում ընթացող ֆիզիկական պրոցեսները: Ե. ունի Երկրի ֆիզիկա, ջրաֆիզիկա և մթնոլորտի ֆիզիկա բաժինները: Երկրի ֆիզիկայի հիմնական ճյուղերն են՝ գրավիչափությունը, մագնիսաչափությունը, էլեկտրաչափությունը, սեյսմոլոգիան և ռադիոչափությունը, որոնք հետազոտում են երկրակեղևի ու վերին մանթիայի կառուցվածքները: Ջրաֆիզիկան ուսումնասիրում է ջրոլորտի ֆիզիկական հատկություններն ու այնտեղ ընթացող ֆիզիկական պրոցեսները: Մթնոլորտի ֆիզիկան ուսումնասիրում է օդի քիմ. և կոլոիդային բաղադրությունը, ջրային գոլորշիների սուբլիմացիայի և կոնդենսացիայի պրոցեսները, ամպերի, մառախուղի և տեղումների առաջացումը, թերմոդինամիկական պրոցեսներն ու ճառագայթային, օպտիկական, էլեկտրական և ձայնային երևույթները մթնոլորտում: Առանձնացվում են երկրաֆիզիկական կիրառական գիտություններ՝ հետախուզական (տես Երկրաֆիզիկական մեթոդներ հետախույզման) և հանքագործական:

Ե-ի զարգացումը խթանում է մարդկու-  
թյանը շրջապատող միջավայրի վիճակը  
(հատկապես եղանակի և ջրաբանական  
ռեժիմի) կանխատեսելու, բնական հա-  
րըստությունները յուրացնելու, բնական  
պրոցեսների ընթացքը կարգավորելու ան-  
հրաժեշտությունը, ինչպես նաև տիեզե-  
րական թռիչքների ծրագրավորման առա-  
ջադրած պահանջները: Ներկայումս Ե-ում  
օգտագործվում են նորագույն և բարձր  
ճշտության սարքեր, հաշվիչ մեքենաներ,  
որոնք հնարավորություն են տալիս մե-  
քենայական մշակման ենթարկել դիտո-  
ղություններից ստացված մեծաքանակ  
տվյալները:

ՀՀ-ում երկրաֆիզիկական հետևողա-  
կան ոլսումնասիրություններն սկսվել  
են 1945-ից, երբ ՀՍՍՀ ԳԱ երկրաբա-  
նական գիտությունների ինստ-ի երկրա-  
ֆիզիկական խումբը ձեռնամուխ եղավ  
հանրապետության տարածքի գրավիչա-  
փական և մագնիսաչափական հետազո-  
տություններին: 1950-ին ՀՍՍՀ-ում կազ-  
մակերպվել է Հայկական երկրաֆիզի-  
կական արշավախումբը, որը հետագայում  
մտավ ՀՍՍՀ Մինիստրների սովետի երկ-  
րաբանական վարչության մեջ: Հանրա-  
պետությունում Ե-ի զարգացմանը նպաս-  
տեց 1961-ին Լենինականում կազմակերպ-

ված ՀՍՍՀ ԳԱ երկրաֆիզիկայի և ին-  
ժեներային սեյսմոլոգիայի ինստ-ը: Այժմ  
երկրաֆիզիկական գիտահետազոտական  
և արտադրական աշխատանքներ են տար-  
վում լավային հզոր ծածկոցների ու բարդ  
ռելիեֆի պայմաններում խորքային երկ-  
րաբանական կառուցվածքների բացա-  
հայտման, օգտակար հանածոների հայտ-  
նաբերման, հանքավայրերի որոնման  
երկրաֆիզիկական ռացիոնալ մեթոդի-  
կայի մշակման, ապարների հնէամագնի-  
սական հատկությունների, բարձր ճշնշ-  
ման և ջերմաստիճանի պայմաններում  
նյութերի ֆիզիկական հատկությունների,  
երկրի ջերմային և ռադիոակտիվության  
դաշտերի, մթնոլորտի էլեկտրականու-  
թյան ուսումնասիրման, երկրաշարժերի  
կանխագուշակման պրոբլեմի հետ կապ-  
ված երկրաֆիզիկական դաշտերի համա-  
լիր հետազոտման, երկրակեղևի նորա-  
գույն և ժամանակակից շարժումների,  
սեյսմիկ ռեժիմի, սեյսմոլոգիական և  
սեյսմոտեկտոնական, ինչպես նաև մագ-  
նիսային և գրավիտացիոն դաշտերի դա-  
րավոր փոփոխությունների պարզաբան-  
ման ուղղություններով: